# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 14 >> 10 2013թ. N: 250-Ա ք.Գյումրի

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 626-Ն որոշմամբ հաստատված <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի>> 10-րդ և 11-րդ կետերի դրույթները՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Մ. Խորենացու փողոցի մասնակի վերանորոգման /Շիրակացի փողոցից մինչև Սախարովի հրապարակ/ աշխատանքները ընդունելու նպատակով ձևավորել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Ալբերտ Մարգարյանին՝ սահմանված ժամկետում և կարգով կազմել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և ներկայացնել հաստատման:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2013 թվականի նոյեմբերի 14-ի
N250-Ա կարգադրության

# Կ Ա Զ Մ
## ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ալբերտ Մարգարյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ նախագահ,

Անդամներ՝

Խաչատուր Խնձրցյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,

Հենրիկ Քոչինյան – ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ տնօրեն,

Գեղամ Հակոբյան - Քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ - քաղաքաշինական պետական տեսուչ,

Կոլյա Հարությունյան - <<Ախուրյանի ՃՇՇ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

Անուշավան Հարությունյան - <<Հայկասար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Կնյազ Մանասյան – Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝

Խ. Պողոսյան